ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004 թ. ապրիլի 11)

«Քաջալերեցարուք, ես եմ, մի երկնչիք»
(Մարկ. Զ. 50):

Սիրելի ժողովուրդ.

Այսպէս դիմեց Քրիստոս Իր աշակերտներին, ովքեր բաց ծովում նաւակի մէջ էին՝ ուժգին քամուց ու ալեկոծումից անհանգիստ ու վախեցած: Եւ տեսան Յիսուսին, որ ալիքների վրայով մօտեցաւ ու մտաւ նաւակ: Ես եմ,– ասաց,– քաջալերուեցէք ու մի վախեցէք: Նոյն պահին քամին դադարեց: Մահաշունչ տարերքը փոխուեց խաղաղութեան, և կեանքը շողաց տագնապած հոգիներին:

Նաւակի մէջ Տիրոջով կեանքն իսկ էր նրանց կողքին, բայց դեռ չէին ճանաչում: Դեռ շատ էին քայլելու իրենց Վարդապետի հետ, տեսնելու էին անթիւ բժշկութիւններ, լսելու էին Նրան, նաև՝ այն մասին, որ չարչարուելու է ու մահուան մատնուելու: Վախեցած ու յուսահատ՝ դեռ տեսնելու էին գերեզմանը, ուր դրել էին իրենց խաչեալ Վարդապետին: Դեռ պիտի տեսնէին Նրան՝ Յարուցեալ իրենց մէջ կանգնած, կրկին լսէին «Ես եմ, մի վախեցէք» Տէրունական պատգամը: Այդժամ պիտի բացուէր նրանց մտքերը, և պիտի ճանաչէին, որ Փրկիչն է աշխարհի ու հաւատային, որ ընդմիշտ խորտակուած է մահը, և մենք ունենք Յարութիւն ու Կեանք: Ունենք յոյսը նորոգուելու, Յարուցեալին կերպարանակից լինելու, Նրանով Աստուծոյ որդիներ կոչուելու և ժառանգակից լինելու երկնային թագաւորութեան:

Զատկական այս սուրբ առաւօտ Յարութեան խորհուրդը մեր նորոգուած յոյսի ու հաւատի միջից վերստին կոչում է մեզ՝«Քաջալերուեցէք, ես եմ»: Տիրոջ այս պատգամը մարդկային մեր հոգիներին կենդանաբեր ու զուարթացնող երկնային ցողի պէս է իջնում այսօր, երբ անհանգիստ ենք աշխարհի տագնապալի անցուդարձերից, երբ յաճախ տկար ենք ներկայ կեանքի հրամայականների առջև, տկար՝ մեր երկիւղներով, մտատանջ ու երկմտած՝ մեզ հուզող հարցականներից: Շատ է փոխուել աշխարհը Քրիստոսի ժամանակներից ի վեր, փոխուել են մարդու հնարաւորութիւնները, մարդկութիւնը լրացրել ու շարունակում է լրացնել իր կեանքի բազմաթիւ պակասութիւններ, սակայն շարունակում է պակաս մնալ ամենակարևորը՝ մարդկային հոգու արծագանքը խաղաղութեան ու մարդկանց մէջ հաճութեան աստուածային հրաւէրին: Գիտատեխնիկական դարի ներկայ ժամանակներում մարդկութիւնը ճեղքել է հիւլեն, նուաճում է տիեզերքը, ի զօրու է մշակովի դարձնել անապատը, սակայն չի յաջողել լռեցնել պատերազմի ձայները, վերացնել կարիքն ու աղքատութիւնը. ամեն օր հազարաւոր թերթեր ու ամսագրեր, ռադիօ, հեռուստատեսութիւն, գրքեր խօսք են ասում՝ խօսք, որով մարդը պսակն է արարչութեան, սակայն պաշտպանութեան կարիք են զգում համամարդկային,

digitised by A.R.A.R.@

անանց բարոյական արժէքները, և մանաւանդ՝ մարդասիրութիւնը: Արդարև, ի՞նչ կարող ենք յուսալ, եթէ մարդկանց սրտերից բացակայեն բարոյական օրէնք, սրբութիւն և մարդասիրութիւն, եթէ մարդիկ չունենան երկիւղն Աստուծոյ: Ինքն Աստուած է տուել մեզ ճշմարիտ մարդասիրութեան անգերազանցելի օրինակը՝ մեր փրկութեան համար Իր Միածին Որդուն աշխարհ առաքելով: Նրանով ճանաչեցինք սէրը, քանզի մեզ համար խաչը յանձն առաւ, որպէսզի յարութիւն ունենանք: Աստծուն սիրող հոգիներից պիտի բխի մարդասիրութիւնը՝ իբրև բոլոր ժամանակների, բոլոր հասարակութիւնների մեծագոյն նուաճում:

Այսօր վերստին տեսնում ենք երկինքը շնորհով բացուած և Մարդասէր Աստուծոյ դէմքը դէպի մեզ խոնարհուած: Այսօր Յարուցեալ Քրիստոս գալիս է մեր հոգսերը վերցնելու, մեր վշտերը փարատելու, մեր տարակոյսները ցրելու, ազատելու մեզ մահաբեր նաւաբեկութիւններից ու խաղաղ երկինքը մեզանից վեր պարզելու: Նա կարգել է մեզ մարդկանց ծառայելու Իրեն գործակիցներ: Արդ, ամեն գործ որ ձեռնարկենք, գործենք այնպէս, կարծէս Աստուծոյ համար ենք անում (Կող. Գ. 23), և Քրիստոս Իր օրհնութեամբ կլրացնի մնացեալը, ինչ որ վեր է մարդկային մեր ուժերից:

Սիրելի ժողովուրդ հայոց. Իր օրհնաբեր ներկայութեամբ, Իր փրկագործ զօրութեամբ մեր կողքին է եղել Տէրը, ուր էլ ուղղորդուել է մեր կեանքի նաւը մեր պատմութեան դժուարին, թէ հեշտընթաց ուղիներում: Մեր կողքին է եղել և չի լքել մեզ Աստուած մահատեսիլ օրհասների մէջ, երբ մարդկանցից յոյսներս կտրած միայնակ ենք մնացել: Յարութեան լոյսն է մեր բոլոր Աւարայրներից ու Սարդարապատերից վեր, Յարութեամբ են լուսեպսակ հայոց Գողգոթաների ճանապարհները, որ սփռեցին մեզ աշխարհէ-աշխարհ: Յարուցեալ է այսօր մեր պետականութիւնը, և կեանքի բոլոր յանգրուաններում սպասում է մեզ Տէրը՝ սփռելու մեզ վրայ Իր լոյսն ու խաղաղութիւնը, օրհնելու, արդիւնաւորելու մեր ջանքերն ու աշխատանքը: Միայն թէ մեր լաւին վատութիւն չխառնենք, չխառնենք ճշմարտին՝ կեղծիք: Ճշմարիտը անկախ Հայաստանն ու ազատ Արցախն է և մեր հայրենասիրութիւնը, մեր համերաշխութիւնը և միաբանութիւնը: Չլինի, որ պարտական մնանք նուիրական այս ճշմարտութիւնների առջև, չլինի, որ պարտական մնանք մեր պատմութեան, Եռաբլուրում հանգչող մեր մարտիրոս զաւակների, մեր սերունդների առջև: Անեղծ պահենք մեր համազգային միաբանութիւնը, նրանով է պայծառ մեր կեանքի, մեր հաւատի աստուածատես լոյսը: Չկայ, արդարև, հաւատի աւելի մեծ արտայայտութիւն, քան միաբանութիւնը, և չկայ աւելի մեծ քաջալերութիւն, քան հաւատը, որ մեզ հետ է Աստուած Իր փրկագործող զօրութեամբ:

Այսօրուայ վերափոխուած ու վերափոխուող մեր իրականութեան մէջ անելիքներ շատ ունենք: Դեռ անցնելիք ճանապարհ ունենք, որ պիտի անցնենք միասնաբար, մեր հայրերից ժառանգութիւն ստացած միաբանութեան սուրբ ուխտով, որպէսզի շէնանայ ու զօրանայ Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը, որպէսզի մեր բոլոր գաղթօջախներում ծաղկի հայ կեանքը: Ուր էլ ապրենք՝ Հայրենիքով ու Սուրբ Էջմիածնով պիտի ապրենք, ազգային արժէքներով ու հայրենի ժառանգութեամբ՝ որպէսզի մեր կեանքից ներս թափանցող, ներսից ու դրսից պարտադրուող սին և թիւր գաղափարներից, անհարազատ արժէքներից հեռու մնան մեր զաւակները: Հոգևորական, ծնող, պաշտօնեայ, մտաւորական և ուսուցիչ, ամենքս սիրտ ու հոգի պիտի ներդնենք, որպէսզի հաւատով նորոգուի ու նախնեաց սրբութիւններով շողշողայ հայի հոգին, և Հայրենիքում ու Սփիւռքում մեր զաւակների աչքերի մէջ միշտ ճանաչենք Աստուածատես հայեացքը հաւատի մեր Հօր և Լուսաւորչի՝ Սուրբ Գրիգորի, տեսնենք Աստուծով շնորհալի դէմքերը Սուրբ Սահակ և Մաշտոց մեր մեծ Վարդապետների, Աստուծով աներկիւղ զուարթուն ոգին Սուրբ Վարդանի ու Վարդանանց:

digitised by A.R.A.R.@

Սիրելի հայորդիներ ի սփիւռս աշխարհի, Դուք, որ մօտիկից, և կամ հեռուից Արարատին նայող աչքեր ունէք՝ տեսնում էք նրա տապանակիր հայեացքի տակ տարածուող հայոց փրկութեան տապանը՝ Հայաստանն ու Արցախը: Դուք, որ Արագածի բարձունքից վեր տեսնում էք Լուսաւորչի Կանթեղից ճառագող անմար լոյսը, հաւատացէք, որ մեր հայրերի Աստուած գործելու է մեր հողում մեր հաւատի միջոցով, գործելու է հանուր ազգային մեր կեանքում, որի վրայ Յարութեան յոյսն է այսօր թևածում:

Քրիստոսի սքանչելի Սուրբ Յարութեան մեծ աւետիսով համայն հայոց Միածնաէջ Մայր Աթոռից Մեր ողջոյնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին և քրիստոնէական քոյր եկեղեցիների Առաջնորդներին: Մեր օրհնութիւնն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին, թեմական և եկեղեցական վարչութեանց նուիրեալ անդամներին:

Ողջունում և օրհնում ենք հայոց պետական աւագանուն՝ գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկադի Ղուկասեանին, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական ներկայացուցիչներին և հանուր մեր ժողովրդին՝ ի Հայաստան, Արցախ և ի Սփիւռս:

Լոյսի և յոյսի, քաջալերութեան այս բարի առաւօտ աղօթենք և հայցենք միաձայն. Խաղաղութեամբ Քո Քրիստոս, Փրկիչ մեր, ապահով ու անխռով պահիր աշխարհը համայն և օրհնութիւնդ սփռիր բոլոր ազգերի վրայ: Քո շնորհի ներքոյ պահպանիր և ազգս հայոց ու լուսաւոր արա նոր ճանապարհը և նոր յոյսերը մեր Հայրենիքի: Շնորհիր մեզ, Տէր, հոգի իմաստութեան և հաշտութեան, այլև՝ «Քաջալերուեցէք, Ես եմ» խօսքիդ համաձայն պարգևիր Քո յարուցեալ ներկայութիւնից զօրացած սիրտ, որպէսզի նրանով ապրենք մեզ վստահուած կեանքը ու կեանք ունենանք յաւիտենական՝ մեր սուրբ հայրերի հետ յաւիտեանս փառաւորելով Քեզ՝ Միածին Որդուդ ընդ Հօր և Սուրբ Հոգու. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

digitised by A.R.A.R.@